TELCELL

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի 2026 թ. 1-ին եռամսյակի հաշվետվություն



15.05.26

Բովանդակություն

- Կառավարման մարմինների միջանկյալ զեկույց 3
  - Կորպորատիվ իրադարձություններ 3
  - Տերմինալային ցանցի զարգացում 5
  - Բջջային հավելվածի զարգացում 7
  - Կադրային քաղաքականություն 11
- Ֆինանսական վերլուծություն 13
- Ռիսկեր և անորոշություններ 18
- Ռազմավարություն և զարգացման միտումներ 19
- ՖՀՄՍ հաշվետվություն 21
- Պատասխանատու անձանց հայտարարություն 27

Կարևոր իրադարձությունների նկարագիր

1. Կորպորատիվ իրադարձություններ

1.1 Նոր վարչակազմակերպական կառուցվածքը գործարկելու մասին

2026 թ. 1-ին եռամսյակում «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ն շարունակել է կառավարման համակարգի արդիականացումը: Ընկերության Խորհրդի 19.12.2025 թ. թիվ 191225 արձանագրային որոշմամբ հաստատվել է վարչակազմակերպական նոր կառուցվածքը, որն ուժի մեջ է մտել 2026 թ. մարտի 1-ից: Փոփոխությունների առանցքային նպատակն է կառավարման օղակների օպտիմալացումը, գործառնական արդյունավետության բարձրացումը և Ընկերության կառուցվածքը շուկայական արդի իրողություններին համապատասխանեցնելը:

1.2 Տերմինալների ցանցի և գործընկերների սպասարկման բաժինների օպտիմալացում

Ընկերությունում իրականացվել է «Օպերատորների ներգրավման և սպասարկման» ու «Տերմինալների ցանցի զարգացման» բաժինների միավորում, ինչի արդյունքում ստեղծվել է «Տերմինալների ցանցի զարգացման և գործընկերների ներգրավման բաժինը»: Այս փոփոխությունը պայմանավորված է ներգրավվող օպերատորների քանակի նվազմամբ, ինչը հնարավորություն է տվել կրճատելու երկու հաստիք, նվազեցնելու վարչական ծախսերը և բարելավելու գործառույթների համակարգվածությունը՝ խուսափելով տեղեկատվության կրկնությունից: Միավորված բաժնի վերահսկողությունը վերապահվել է գլխավոր տնօրենի տեղակալին:

1.3 Թվայնացման գծով ռազմավարական նոր հաստիքի ներդրում

Կառուցվածքում ավելացվել է «Թվայնացման գծով գլխավոր տնօրենի խորհրդական»-ի հաստիքը՝ նպատակ ունենալով բարձրացնել կառավարման որակը և ապահովել ընկերության թվային վերափոխումը: Խորհրդականի ներգրավումը հնարավորություն կտա արդյունավետորեն ձևավորել թվային ռազմավարությունը, գնահատել ներդրումային ռիսկերը SS ոլորտում և ներդնել նորարարական լուծումներ, որոնք կբարձրացնեն ընկերության մրցունակությունը շուկայում:

1.4 Բիզնեսի զարգացման տնօրինության վերադիրքավորում

«Բիզնեսի զարգացման տնօրինությունը» վերանվանվել է «Թվային բիզնեսի զարգացման տնօրինություն»: Այս փոփոխությունն արտացոլում է ընկերության պրոդուկտների և ծառայությունների մեծ մասի կենտրոնացումը թվային և էլեկտրոնային հարթակներում: Վերանվանումը նպատակ ունի կենտրոնացված կառավարել թվային պրոդուկտների վաճառքը, օգտատերերի սպասարկումը և թվային նոր ծառայությունների մշակման ողջ գործընթացը:

1.5 Ֆինանսական վերլուծությունների և բյուջետավորման գործառույթների համախմբում

«Հաշվապահական հաշվառման և ֆինանսական դեպարտամենտի» ներքո գործող «Հաշվետվությունների», «Բյուջետավորման և հաշվետվությունների» ու «Ֆինանսական վերլուծությունների» բաժինները միավորվել են մեկ միասնական՝ «Բյուջետավորման, հաշվետվությունների և ֆինանսական վերլուծության բաժնի» մեջ: Սա թույլ կտա կենտրոնացնել ֆինանսական պլանավորումը, բացառել ֆունկցիոնալ կրկնությունները և ապահովել բյուջեի կատարողականի վերաբերյալ առավել ամբողջական ու արագ պատկեր՝ նպաստելով օպերատիվ կառավարչական որոշումների կայացմանը:

1.6 Վերլուծական բաժնի տեղափոխում և վերանվանում

«Վերլուծությունների և հաշվետվությունների բաժինը» տեղափոխվել է «Տեխնոլոգիաների գծով տնօրինությունից» դեպի «Հաշվապահական հաշվառման և ֆինանսական դեպարտամենտ»՝ վերանվանվելով «Տվյալների և հաշվարկների գործառնական բաժին»: Փոփոխությունը նպատակաուղղված է ֆինանսական մեծածավալ տվյալների մշակման և տեխնիկական հաշվարկների կենտրոնացմանը, ինչը կնվազեցնի տեխնիկական ռիսկերը, կիստակեցնի աշխատանքի բաժանումը և կբարձրացնի տրամադրվող տեղեկատվության ճշգրտությունն ու թափանցիկությունը:

1.7 Անվտանգության ստորաբաժանման կարգավիճակի հստակեցում

«Ռիսկերի կառավարման և ներքին հսկողության դեպարտամենտի» կազմում գործող «Անվտանգության բաժինը» վերանվանվել է «Ներքին անվտանգության բաժին»: Այս փոփոխությունը կրում է կառուցվածքային հստակեցման բնույթ՝ ավելի ճշգրիտ սահմանելով բաժնի դերն ու գործառույթների շրջանակը ընկերության ներքին վերահսկողության համակարգում:

2. Տերմինալային ցանցի զարգացում

2026 թ. 1-ին եռամսյակի ընթացքում Telcell ընկերության «Տերմինալների ցանցի զարգացման և գործընկերների ներգրավման բաժինը» շարունակել է համակարգային բարելավումներն ուղղված ցանցի արդյունավետության, ծառայությունների հասանելիության և եկամտաբերության աճին:

Շարունակական բարելավում

2026 թ. 1-ին եռամսյակի ընթացքում Telcell վճարային համակարգին միացվել է ավելի քան 19 նոր ծառայություն մատուցող, որոնց օգտին հնարավոր է վճարումներ կատարել տերմինալների միջոցով: Դա զգալիորեն ընդլայնել է Telcell համակարգում հասանելի ծառայությունների շրջանակը: Ժամանակահատվածի հիմնական ռազմավարական հենքերից մեկը եղել է տերմինալային ցանցի օպտիմալացումը՝ ըստ եկամտաբերության:
2026 թվականի առաջին եռամսյակի ընթացքում շարունակվել են տերմինալների տեղակայման օպտիմալացման և նպատակային տեղափոխությունների աշխատանքները: Զուգահեռաբար իրականացվել են տեխնիկական և գործառնական բարելավումներ՝ ապահովելով կայուն աշխատանք և խափանումների նվազեցում:

Ակտիվ աշխատանքներ են տարվել գործընկերների ներգրավման և նոր ծառայությունների ինտեգրման ուղղությամբ, ներառյալ միջազգային վճարային լուծումները:

Հաշվետու ժամանակահատվածում առկա նույնականացման գործընթացների հետ կապված մարտահրավերը օպերատիվ կերպով կառավարվել և հաջողությամբ հաղթահարվել է՝ ապահովելով ծառայությունների անխափան շարունակականությունը և ռիսկերի վերահսկելի մակարդակը:

Գործընկերային ցանցի ընդլայնում

- **Տերմինալային բիզնեսի զարգացումը**

- Ընդհանուր՝ 4780 տերմինալ:
- Առաջին եռամսյակի ընթացքում նոր վայրերում տեղադրվել է 285 տերմինալ:
- Գյուղերում տեղադրված տերմինալների քանակը՝ 1191:
- Մարզերում տեղաբաշխված է Ընկերության տերմինալային ցանցի 54%-ը:



3. Բջջային հավելվածի զարգացում

Օգտատերերի բազա

- Նոր նույնականացված օգտատեր՝ 24,373:
- Telcell Wallet-ի միջոցով բացված բանկային հաշիվների/քարտերի ընդհանուր թիվը եռամսյակում.
- բացվել է մոտ 15,000 բանկային հաշիվ,
- թողարկվել է մոտ 92,500 Visa թվային քարտ, որոնցից 9000-ը բացվել է հաշվետու եռամսյակի ընթացքում:

Փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) հետ համագործակցությունը

Ընկերությունը շարունակում է ընդլայնել իր գործընկերների ցանցը՝ աջակցելով փոքր ու միջին բիզնեսներին իրենց մատուցած ծառայությունների դիմաց վճարումներ ընդունել Telcell վճարային համակարգի միջոցով՝ թե՛ օֆլայն, թե՛ օնլայն տիրույթներում:

Telcell համակարգերի միջոցով վճարումներ իրականացնող ՓՄՁ-ներ

- **Էլեկտրոնային փողով վճարումներ QR գործիքով**. ավելի քան 4600 ՓՄՁ:
- **E-commerce հարթակներում էլեկտրոնային փողով վճարումներ** (կայք/հավելված). օնլայն հարթակներում ծառայություն մատուցող ավելի քան 600 ՓՄՁ:
- **Telcell համակարգով** (Telcell Wallet-ում) վճարումների ընդունում. ավելի քան 700 ծառայության դիմաց:
- **PartPay (BNPL)**. շուրջ 991 գործընկեր իրենց վաճառակետերում և առցանց հարթակներում առաջարկում են «Գնիր հիմա, վճարիր հետո» ձևաչափով վճարման հնարավորություն: Վերջիններս իրենց վաճառակետերում ներդրել են Telcell Wallet-ի վճարային գործիքները, ինչը հաճախորդներին հնարավորություն է տալիս կատարել գնումներ՝ վճարումը **բաժանելով մասերի** (Ընկերության գործընկեր վարկային կազմակերպության միջոցով ապառիկ վարկավորմամբ):
- **100% by Telcell լիցքավորման սարքեր**. գործում է 480 կայան, որոնցից օգտվելու վճարումներն իրականացվում են բացառապես Telcell Wallet-ի միջոցով:

Հաշվետու ժամանակահատվածում Telcell համակարգերին միացած ծառայություններ մատուցողների քանակը

- **Էլեկտրոնային փողով վճարումներ QR գործիքով**. ցանցն ընդլայնվել է 73 նոր ՓՄՁ-ով, որոնք ներդրել են էլեկտրոնային փողով անհպում վճարումների QR գործիքակազմը:
- **E-commerce հարթակներում էլեկտրոնային փողով վճարումներ** (կայք/հավելված). 8 նոր օնլայն հարթակ (կայքեր և հավելվածներ) ինտեգրել են Telcell վճարային լուծումները՝ ապահովելով թվային գործարքների հասանելիություն իրենց հաճախորդների համար:
- **Telcell համակարգով** (Telcell Wallet-ում). հավելվածի միջոցով վճարումների ընդունման համակարգին է միացել շուրջ 20 նոր ծառայություն մատուցող:
- **100% by Telcell լիցքավորման սարքերի կայաններ**. հաշվետու ժամանակահատվածում տեղադրվել է 36 նոր կայան, որոնց օգտին վճարումներն ընդունվում են Telcell Wallet-ով:
- **PartPay (BNPL).** ընդլայնվել է **PartPay ծառայության** ձևաչափով համագործակցող գործընկերների ցանկը՝ համալրվելով 36 նոր ծառայություն մատուցողներով:

Մարզային ծածկույթ

Telcell-ը շարունակում է ակտիվ աշխատանքները մարզային ՓՄՁ-ների ներգրավման ուղղությամբ: Հաշվետու ժամանակահատվածում Երևանից դուրս գտնվող տարածքներում նոր միացած ծառայություն մատուցողների տեսակարար կշիռը կազմել է.

- **Էլեկտրոնային փողով վճարումներ QR գործիքով**. 8 նոր ՓՄՁ:
- **100% by Telcell լիցքավորման սարքեր**. տեղադրվել է 12 նոր կայան:
- **PartPay (BNPL).** 26 նոր գործընկեր մարզերում սկսել է կիրառել PartPay (BNPL) ծառայությունը՝ հնարավորություն տալով տեղի բնակիչներին օգտվել մաս-մաս վճարման գործիքակազմից:

Ակտիվ օգտատերեր

Հաշվետու ժամանակահատվածում ակտիվ օգտատերերի թիվը միջինում կազմել է մոտ 210,000 օգտատեր:

Գործընկեր բանկերի վարկային պրոդուկտների տրամադրման հնարավորության մեկնարկը Telcell Wallet հավելվածի միջոցով

Արդեն իսկ գործող վարկային ծառայությունների կողքին, որոնք հասանելի են այլ կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում, այսուհետ Telcell Wallet-ի միջոցով հնարավոր է վարկային հայտ ներկայացնել և ստանալ վարկավորում նաև «Հայէկոնոմբանկ» (AEB) ԲԲԸ-ից:

Կանխիկացում. բիզնեսի նոր ուղղության ակտիվ զարգացումը և տարածումը

Ծառայությունը հնարավորություն է տալիս Telcell Wallet-ի նույնականացված օգտատերերին կանխիկացնել միջոցներ մետրոյի բոլոր կայարաններում և «Yerevan City» մասնաճյուղերում տեղադրված հատուկ տերմինալներից: Ծառայությունը գործում է 1,5% միջնորդավճարով և թույլ է տալիս իրականացնել մինչև 100,000 ՀՀ դրամի միանվագ կանխիկացում բացառապես հավելվածին կից Էվոկաբանկի և Հայէկոնոմբանկի հաշիվներից՝ ապահովելով բարձր անվտանգություն անձի հաստատման և դինամիկ QR կոդի սքանավորման միջոցով:

Տերմինալով գործարք իրականացնող օգտատերերի նույնականացման համակարգի ներդրման գործընթացի ակտիվ գործարկումը

Հաշվետու ժամանակաշրջանում, հիմք ընդունելով ՓԼ/ԱՖ (Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի) մասին ՀՀ օրենսդրական պահանջները, Telcell-ը ներդրել է բանկային հաշիվների և քարտերի համալրման նորացված և առավել անվտանգ գործընթաց: Այսուհետ օգտատերը բանկային տվյալները մուտքագրելուց հետո պետք է սքանավորի տերմինալի էկրանին հայտնված QR կոդը կամ հաստատի գործարքը Push ծանուցման միջոցով, ինչից հետո միայն համակարգը թույլատրում է իրականացնել կանխիկի մուտքագրումն ու վճարումը: Այս փոփոխությունն ապահովում է գործարքների լիարժեք թափանցիկություն և օգտատերերի տվյալների պաշտպանության բարձր մակարդակ:

Ծառայությունների խթանման ակցիաներ

I. «5% քեշբեք Telcell Wallet-ի Visa թվային քարտով» ակցիա

Փետրվարի 10-ից ապրիլի 10-ը Telcell Visa թվային քարտ ունեցող օգտատերերի համար գործել է 5% քեշբեքի առաջարկ: Նախաձեռնության նպատակն էր ակտիվացնել Telcell Visa թվային քարտի օգտագործումը և խթանել քարտային ու թվային վճարումների աճը: Արդյունքում աճել են նոր բացվող քարտերի քանակը, թվային քարտով կատարված գործարքները, բարձրացել է քարտի օգտագործման ակտիվությունը և ամրապնդվել է օգտատերերի հավատարմությունը:

II. «5% քեշբեք Telcell Wallet-ի Visa թվային քարտով» ակցիա

Փետրվարի 10-ից ապրիլի 10-ը Telcell Visa թվային քարտով վճարելիս օգտատերերը ստացել են 5% զեղչ Gant, Converse, Ramsey և Colin's խանութներում: Ակցիայի նպատակն էր խթանել Telcell Visa քարտի կիրառումը retail սեգմենտում և զարգացնել գործընկերային առաջարկների արժեքը: Արդյունքում բարձրացել է քարտի ընկալումը որպես շահավետ վճարային գործիք, ինչպես նաև աճել են գործընկեր խանութներում Telcell Visa թվային քարտով կատարված վճարումները:

III. Զեղչ՝ Koreez մաթեմատիկական մրցույթի մասնակիցների համար

Koreez մաթեմատիկական մրցույթին մասնակցության վճարումը Telcell Terminal-ով կատարողներին տրամադրվել է 10% զեղչ: Նախաձեռնության նպատակն էր խթանել կրթական ծրագրերը և ծառայությունների վճարումները Telcell Terminal-ների միջոցով և ընդլայնել տերմինալների կիրառելիությունը: Արդյունքում աճել է կրթական ուղղությամբ վճարումների ծավալը և Telcell Terminal-ների օգտագործումը նոր սեգմենտում: Իսկ Telcell Wallet-ով գրանցվող մասնակիցների համար գործել է 20% զեղչ: Ակցիայի նպատակն էր ակտիվացնել Telcell Wallet-ով կրթական վճարումները և խրախուսել թվային գրանցումները:

IV. 7% քեշբեք Telcell Wallet-ով վճարելիս

Mi Armenia խանութում Telcell Wallet-ով վճարող օգտատերերը ստացել են 7% քեշբեք: Նախաձեռնության նպատակն էր խթանել Telcell Wallet-ով վճարումները էլեկտրոնիկայի և տեխնիկայի սեգմենտներում: Արդյունքում ավելացել են Telcell Wallet-ով կատարված բարձրարժեք գնումները, ինչպես նաև մեծացել է օգտատերերի շահագրգռվածությունը Telcell Wallet-ը որպես հիմնական վճարման միջոց օգտագործելու հարցում:

4. Ընկերության կադրային քաղաքականությունը

Ընկերության կորպորատիվ կառավարման համակարգի կատարելագործման շրջանակում առաջնային տեղ է հատկացվում արդյունավետ կադրային քաղաքականության վարմանը: Այն ուղղված է անձնակազմի կառավարման արդյունավետ համակարգի ստեղծմանը, որն ապահովում է Ընկերության ռազմավարական նպատակների իրագործումը:

Կադրային քաղաքականությունը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա.

- **Արդարություն և հավասար հնարավորություններ**. աշխատակիցները պետք է ունենան հավասար իրավունքներ ու հնարավորություններ՝ անկախ սեռից, ազգությունից, կրոնից կամ այլ անհատական հատկանիշներից:
- **Մասնագիտական զարգացում**. ստեղծվում են պայմաններ շարունակական ուսուցման և կարիերայի առաջխաղացման համար:
- **Թափանցիկություն և բաց գործընթացներ**. կադրային քաղաքականությունն իրականացվում է պարզ ու կանխատեսելի մեխանիզմներով:
- **Մոտիվացիայի և վարձատրության արդար համակարգ**. վարձատրությունն ու խրախուսման մեխանիզմները համահունչ են աշխատակցի ներդրմանը և ցույց տված արդյունքներին:
- **Բարենպաստ աշխատանքային միջավայր**. խթանվում են թիմային աշխատանքը, վստահության և փոխադարձ հարգանքի մշակույթը:

Սույն հաշվետվությունն ամփոփում է 2026 թ. 1-ին եռամսյակում Ընկերության աշխատակազմի կառուցվածքի, շարժի և մասնագիտական զարգացման վերաբերյալ հիմնական տվյալները:

Աշխատակազմի կառավարումը և մասնագիտական զարգացումը շարունակել են մնալ Ընկերության կարևորագույն ուղղություններից

- Աշխատակիցների ընդհանուր թիվը.
  - 2026 թ. մարտի 31-ի դրությամբ՝ 359:
- Աշխատակազմի համալրում.
  - Առաջին եռամսյակում ընդունվել է 9 նոր աշխատակից:
- Թվային և տեխնիկական աշխատակիցների քանակը՝ նոր կամ վերապատրաստված.
  - մարտի 31-ի դրությամբ՝ 5:

Գենդերային կազմ և հավասարություն

- Ընդհանուր կազմ.
  - 45,7% կին և 54,3% տղամարդ:
- Կանայք ղեկավար և տեխնիկական պաշտոններում.
  - 32,9%:

Մասնագիտական զարգացում և վերապատրաստումներ

Հաշվետու ժամանակահատվածում Ընկերությունը շարունակել է ներդրումներ կատարել մարդկային կապիտալի զարգացման գործում: Մասնագիտական որակավորման բարձրացման նպատակով ընկերության 4 առանցքային մասնագետ մասնակցել է «Ցանցային ադմինիստրացիայի հիմունքներ (Level 1)» դասընթացին:

Իրականացվում են նաև նախապատրաստական աշխատանքներ ընկերությունում 360 աստիճան գնահատման մեխանիզմի ներդրման ուղղությամբ: Ներկայումս գտնվում ենք ՀՀ-ում գործող ոլորտի առաջատար ընկերություններից գնառաջարկների հարցման/ստացման փուլում: Նոր մոտիվացիոն համակարգի կիրառման շրջանակում նախատեսվում է կազմակերպել թիմբիլդինգ միջոցառում՝ նախնական երեք դեպարտամենտների աշխատակիցների համար՝ ուղղված թիմային համագործակցության զարգացմանը և աշխատակիցների ներգրավվածության բարձրացմանը:

Ֆինանսական վերլուծություն և էական փոփոխություններ

Հիմնական ցուցանիշներ

Ֆինանսական կայունություն և օպտիմիզացիա

Ըստ ՀՀ ԿԲ վիճակագրության՝ մինչև 2026 թվականը եղել է վճարահաշվարկային և բանկային համակարգերի զարգացման ակտիվ աճի ժամանակաշրջան: Ընդհուպ մինչև 2025 թ. 4-րդ եռամսյակ վճարահաշվարկային կազմակերպությունների քայլերն ուղղված են եղել քարտերի քանակի կտրուկ աճին, տերմինալների քանակի ավելացմանը մարզերում և Երևանում, ինչպես նաև հավելվածներում նոր օպերատորների ակտիվ ներգրավմանը (QR-ով և կցված քարտերով գործարքներ կատարելու նպատակով):
Ավելացել են մրցակիցներ թե՛ տերմինալային ոլորտում, և թե՛ նոր հավելվածներ են ստեղծվել բանկերի և այլ կազմակերպությունների կողմից դրամով և համարժեք միջոցներով գնումների և ծառայությունների դիմաց վճարման նպատակով: Հաշվի առնելով վերոնշյալ զարգացման միտումները՝ Ընկերության ռազմավարությունը վերանայվել է՝ քանակական զարգացման մոտեցումը փոխարինելով որակական աճի ուղղությամբ (տես՝ էջ 19):

Համաձայն ԿԲ վիճակագրության՝ տերմինալների քանակը ՀՀ-ում գերազանցել է 11,501 հատը, որոնցից 54%-ը մարզերում է: Ընկերության տերմինալային ցանցը ևս ունի համադրելի տեղաբաշխում (տես՝ էջ 6) և, լինելով շուկայի առաջատարը, ապահովում է մոտ 41,5% ծածկույթ: Լինելով ամենազարգացած օպերատորական ցանց ունեցող առաջատար ընկերություններից մեկը՝ Ընկերությունը շարունակում է իր օգտատերերին առաջարկել վճարային նոր ուղղություններ, ինչպես նաև բարելավում է առկա ինտեգրացիաների որակը՝ թե՛ տերմինալներով և թե՛ հավելվածով վճարումները դարձնելով ավելի արագ, հասանելի և հարմարավետ:

Հաշվի առնելով Ընկերության հրապարակային լինելը և Վերահսկողի բոլոր պահանջներին համապատասխանելու մոտեցումը՝ Ընկերությունն ապահովել է նաև նույնականացման համակարգերի համապատասխան արդիականացումը: Ներդրված ժամանակակից լուծումները թեև մասնակիորեն հանգեցրին օգտատերերի համար որոշ անհարմարությունների և Ընկերության համար լրացուցիչ ծախսերի, այնուամենայնիվ, ավելի վստահելի և կայուն դարձրին համակարգը: Ընկերությունը շարունակում է հեռանկարային քայլեր ձեռնարկել՝ օգտատերերին տալով նոր մակարդակի որակ և ապահովություն:

Եկամուտների և ծախսերի վերլուծություն

Ընկերության գործունեությունը ունի սեզոնայնության բաղադրիչ և համադրելի վերլուծության համար անհրաժեշտ է ֆինանսական ցուցանիշները դիտարկել նախորդ տարվա նույն եռամսյակի ցուցանիշների հետ:

Կարևոր է հաշվի առնել, որ առաջին եռամսյակում բջջային ցանցի օպերատորների հետ հարաբերությունների վերանայման արդյունքում Ընկերությունը գրեթե մեկ ամիս կորցրել է վերոնշյալ ուղղությամբ թե՛ շրջանառություն, թե՛ համապատասխան եկամուտ:

Նույնիսկ այդ պարագայում հասույթը 2026 թվականի առաջին եռամսյակում կազմել է 2,45 մլրդ դրամ, որն ավելի է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից:

Ծախսերի էական մաս են կազմում Ընկերության աշխատակիցների աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները: 2025 թ. 1-ին եռամսյակում անձնակազմի գծով ծախսը կազմել է 826 մլն դրամ, 2025 թ. ընթացքում միջին եռամսյակային ծախսը կազմել է 765 մլն դրամ, իսկ 2026 թ. առաջին եռամսյակում այն կազմել է 726 մլն դրամ, ինչը 100 մլն-ով ավելի քիչ է նախորդ նույն ժամանակահատվածի համեմատ:

Էականությամբ երկրորդ ծախսային հոդվածը գործակալներին վճարված միջնորդավճարներն են, որոնք նույնպես օպտիմալացվել են և եռամսյակի կտրվածքով նվազել են 69 մլն դրամով նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ:

Երրորդ և չորրորդ էական փոփոխությունները ծախսերի մեջ թույլտվության և ամորտիզացիայի ծախսերն են, որոնք գումարային աճել են 2025 թ. 1-ին եռամսյակի նկատմամբ 110 մլն դրամով (34%-ով), քանի որ Ընկերությունը գնել է նոր սարքավորումներ և համակարգեր միջազգային ISO անվտանգության ստանդարտներին և KYC նույնականացմանը համապատասխանելու համար, ինչպես նաև Cash Out տերմինալային և լիցքավորման սարքերի ցանցերի զարգացման նպատակով:

Որպես հետևանք՝ զուտ եկամուտը եռամսյակի կտրվածքով նվազել է 83 մլն դրամով և կազմել է շուրջ 131 մլն դրամ (տես՝ էջ 23):

Ակտիվների և պասիվների վերլուծություն

Ստորև ներկայացված է ակտիվների աղյուսակը (մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է ՖՀՄՍ հաշվետվությունում, տես՝ էջ 21):

Հազար ՀՀ դրամ	31/03/26	31/12/25
Ակտիվներ		
Հիմնական միջոցներ	1,351,867	1,358,051
Ոչ նյութական ակտիվներ	759,183	724,319
Գուդվիլ	1,157,700	1,157,700
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	96,558	128,922
Կանխավճարներ	46,214	31,665
Տրամադրված փոխառություններ	287,684	287,684
Հետաձգված հարկային ակտիվներ	88,468	88,467
Բաժնային գործիքներ (ներդրումներ այլ ընկերություններում)	100,000	-
Ոչ ընթացիկ ակտիվներ	**3,887,674**	**3,776,808**
Պաշարներ	214,412	234,505
Տրամադրված փոխառություններ	93,752	91,614
Ավանդներ բանկում	158,285	155,326
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,101,939	1,359,471
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	3,511,912	7,956,035
Օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ	3,373,775	4,012,099
Ընթացիկ ակտիվներ	**8,454,075**	**13,809,050**
Ընդամենը ակտիվներ	**12,341,749**	**17,585,858**

Նշանակալից փոփոխություններից է ակտիվներում ներդրումային գործիքների ավելացումը 100 մլն դրամի չափով: Հաշվի առնելով Ընկերության միտումը՝ մասնակցելու ՀՀ կրթական և տեխնոլոգիական զարգացման գործընթացներին, Ընկերությունը ներդրում է կատարել «Կորիզ» կրթական հիմնադրամի բաժնետոմսերում՝ նպաստելով ՀՀ-ում նմանատիպ ծրագրերի զարգացմանը և քաղաքացիների կրթվածության ու բարեկեցության բարձրացմանը:

Ակտիվների և պասիվների վերլուծություն

Պասիվներում էական փոփոխություններից են.

- առևտրային և կրեդիտորական պարտքերի նվազումը գրեթե 5 մլրդ դրամով,
- երկարաժամկետ վարկերի և փոխառությունների նվազումը:

Ելնելով տերմինալային բիզնեսի բնույթից՝ դեկտեմբեր ամսվա վերջում զգալի ազատ դրամական միջոցներ են կուտակվում հաշիվներին: Ուստի բնականոն է դեկտեմբերի վերջի դրությամբ ակտիվներում և պասիվներում ունենալ հավելյալ դրամական միջոցներ: Կրեդիտորական պարտավորությունները և դրամական միջոցները համամասնորեն մարվել են և վերադարձել ընթացիկ չափի:
Վերջինիս համատեքստում Ընկերությունը շարունակում է նվազեցնել ֆինանսական բեռը և ֆինանսական ծախսերը, ինչը նպաստում է ռազմավարական նպատակների իրագործման համար ավելի ապահով միջավայրի ձևավորմանը:

Ստորև ներկայացված է պասիվների աղյուսակը (մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է ՖՀՄՍ հաշվետվությունում, տես՝ էջ 21):

Հազար ՀՀ դրամ	31/03/26	31/12/25
Վարկեր և փոխառություններ	296,066	683,220
Վարձակալության գծով պարտավորություն	68,669	68,669
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	137,370	139,970
Ոչ ընթացիկ պարտավորություններ	**502,105**	**891,859**
Վարձակալության գծով պարտավորություն	60,105	92,469
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	6,510,126	11,494,484
Ընթացիկ հարկային պարտավորություններ	98,660	67,188
Ընթացիկ պարտավորություններ	**6,668,890**	**11,654,141**
Ընդամենը պարտավորություններ	**7,170,995**	**12,546,000**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	**12,341,749**	**17,585,858**

Փոփոխություններ սեփական կապիտալում

2026 թ. 1-ին եռամսյակի ընթացքում Ընկերության զուտ շահույթը կազմել է 130 մլն դրամ, իսկ չբաշխված շահույթը՝ 2,35 մլրդ դրամ: 31.03.2026 թ. դրությամբ Ընկերության սեփական կապիտալը կազմել է 5,17 մլրդ դրամ:

2024-26 թթ. չբաշխված շահույթի համեմատությունը, հազ. դր.



Կապիտալի կառուցվածքը 31.03.26-ի դրությամբ



*Այս հաշվետվության մեջ գնահատականներն ու համեմատականներն արված են աուդիտ չանցած հաշվետվությունների հիման վրա, ինչպես նաև որոշ ցուցանիշներ ներկայացված են կլորացված արժեքներով, ուստի գումարելիս կարող են հավասար չլինել միասնական ցուցանիշին:

Ռիսկերի բացահայտում

Բիզնես շարունակականություն

Հաշվի առնելով Ընկերության գործունեության ոլորտային բնույթը և կապը ֆինանսական շուկայի այլ մասնակիցների հետ՝ Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների անընդհատությունը կախված է ոչ միայն ներքին համակարգերից, այլև արտաքին գործընկերների՝ բանկերի, վճարահաշվարկային օպերատորների, կապի և տեխնոլոգիական մատակարարների հուսալիությունից: Նրանց մոտ առաջացած խափանումները կամ ծառայությունների դադարեցումները կարող են անմիջապես ազդել գործարքների կատարման և հարթակի հասանելիության վրա: Դրանով իսկ ձևավորվում է արտաքին ռիսկ, որը զսպելու նպատակով Ընկերությունը ձեռնարկում է բավարար միջոցներ, սակայն որոշ դեպքերում ֆինանսական շուկայի կառուցվածքը թույլ չի տալիս ամբողջությամբ կառավարել ռիսկը:

Փողերի լվացում և համապատասխանություն

Հաշվի առնելով, որ Ընկերության հիմնական ծառայությունները մատուցվում են օգտատերերի հեռակա նույնականացման միջոցով՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համատեքստում հիմնական ռիսկը շարունակում է մնալ իրական շահառուի և կեղծ նույնականացման ռիսկը (KYC ռիսկեր):
Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ներհատուկ ռիսկերը պահանջում են շարունակական բարելավում և գործարքների մշտադիտարկման, կասկածելի գործարքների հայտնաբերման և օգտատերերի պատշաճ նույնականացման արդյունավետ ընթացակարգերի ներդրում:

Ընկերության ռազմավարությունը 2026 թ. 2-րդ եռամսյակի համար

Ընկերության հիմնական ռազմավարությունն է.

- Ընկերության շահութաբերության աճ
- Telcell Wallet հավելվածի օգտատերերի քանակի պահպանում և աճ
- Telcell էկոհամակարգի միջոցով վճարումների ծավալի աճ
- Թիմի աշխատանքի օպտիմալացում և արդյունավետության բարձրացում
- Ծախսերի արդյունավետության բարձրացում

Հաշվի առնելով ֆինանսական շուկայի նոր մարտահրավերները, օրենսդրական և ՀՀ ԿԲ նոր պահանջները՝ վերոնշյալ ռազմավարական նպատակներին հասնելու համար 2026 թ. 2-րդ եռամսյակում Ընկերությունն սահմանում է զարգացման հետևյալ հիմնական ուղղությունները.

1. Բիզնեսին ուղղված գործողություններ

- Տերմինալային ցանցի միջոցով բանկային պրոդուկտներին ուղղված վճարումների համար նույնականացման գործիքակազմի ընդլայնում, մասնավորապես՝ Telcell wallet հավելվածի, բանկային քարտերի և imID համակարգի միջոցով, որը առավել հարմարավետ կդարձնի օգտատերերի կողմից վճարումների իրականացումը:
- Գործընկեր բանկերի և վարկային կազմակերպությունների վարկային պրոդուկտների առաջարկների ընդլայնում Telcell Wallet հավելվածի միջոցով:
- Cash Out տերմինալների նոր բիզնես ուղղության ակտիվ զարգացում և ընդլայնում:
- Տերմինալային ցանցի օպտիմալացում ըստ եկամտաբերության և տարածքների համար վարձավճարների օպտիմալացում:
- Ծառայությունների մատուցման նոր սակագնային քաղաքականության ներդրում և կիրառում:
- Մի շարք ռազմավարական պրոդուկտների ուղղությամբ մարքեթինգային արշավների իրականացում:

2. Նոր նախագծեր և ուղղություններ

- Telcell Wallet հարթակում գործընկեր վարկային կազմակերպությունների և բանկերի համար վարկային պրոդուկտների հարթակի ստեղծում և գործարկում:
- Ընկերության սպասարկման օղակների թվայնացում և էկոհամակարգային լուծումների ներդրում, մասնավորապես՝ տերմինալներում օգտատիրոջ անձնական էջի գործարկում՝ My Telcell:
- Միջոցառումների սպասարկման գործիքակազմի ներդրում, բջջային հեռախոսների լիցքավորման սարքերի ցանցի ընդլայնում, լիցքավորիչների նոր նախագծի մեկնարկ:
- Visa թվային քարտերի շրջանակներում նոր ծառայությունների գործարկում:

3. Կազմակերպական գործողություններ

- Նախագծերի իրականացման նոր ձևաչափի՝ թրայբային մոդելի շրջանակներում նոր նախագծերի ներառում և դրանց կառավարում:
- Աշխատակազմի գնահատման մեխանիզմի ներդրում և մոտիվացիոն նոր համակարգի կիրառում:
- Տեղեկատվական անվտանգության գերժամանակակից համակարգերի ներդրման գործընթացի շարունակություն:

4. Մարքեթինգային և դիրքավորման ուղղված գործողություններ

- Նոր CRM համակարգի կիրառմամբ առավել արդյունավետ մարքեթինգային արշավների իրականացում
- Դրամական փոխանցումների, Visa թվային քարտերի առաջխաղացման և գործընկերների վարկային պրոդուկտների տրամադրման ուղղությամբ մարքեթինգային արշավների իրականացում
- Ընկերության ընկալման, իմիջի ու դիրքավորման փոխակերպում որպես ունիվերսալ և ճկուն ֆինանսական էկոհամակարգ:

ՖՀՄՍ համախմբված հաշվետվություն

1. Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	31/03/26	31/12/25
Ակտիվներ		
Հիմնական միջոցներ	1,351,867	1,358,051
Ոչ նյութական ակտիվներ	759,183	724,319
Գուդվիլ	1,157,700	1,157,700
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	96,558	128,922
Կանխավճարներ	46,214	31,665
Տրամադրված փոխառություններ	287,684	287,684
Հետաձգված հարկային ակտիվներ	88,468	88,467
Բաժնային գործիքներ (ներդրումներ այլ ընկերություններում)	100,000	-
Ոչ ընթացիկ ակտիվներ	**3,887,674**	**3,776,808**
Պաշարներ	214,412	234,505
Տրամադրված փոխառություններ	93,752	91,614
Ավանդներ բանկում	158,285	155,326
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,101,939	1,359,471
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	3,511,912	7,956,035
Օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ	3,373,775	4,012,099
Ընթացիկ ակտիվներ	**8,454,075**	**13,809,050**
Ընդամենը ակտիվներ	**12,341,749**	**17,585,858**

1. Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	31/03/26	31/12/25
Կապիտալ և պահուստներ		
Բաժնետիրական կապիտալ	1,220,450	1,220,450
Էմիսիոն եկամուտ	1,405,250	1,405,250
Պահուստային կապիտալ	181,913	181,913
Չբաշխված շահույթ	2,351,252	2,220,356
Ընկերության սեփականատերերին վերագրելի սեփական կապիտալ	**5,158,865**	**5,027,969**
Չվերահսկվող բաժնեմաս	11,889	11,889
Ընդամենը սեփական կապիտալ	**5,170,754**	**5,039,858**

Հազար ՀՀ դրամ	31/03/26	31/12/25
Վարկեր և փոխառություններ	296,066	683,220
Վարձակալության գծով պարտավորություն	68,669	68,669
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	137,370	139,970
Ոչ ընթացիկ պարտավորություններ	**502,105**	**891,859**
Վարձակալության գծով պարտավորություն	60,105	92,469
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	6,510,126	11,494,484
Ընթացիկ հարկային պարտավորություններ	98,660	67,188
Ընթացիկ պարտավորություններ	**6,668,890**	**11,654,141**
Ընդամենը պարտավորություններ	**7,170,995**	**12,546,000**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	**12,341,749**	**17,585,858**

2. Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	I եռ. 2026	2025
Հասույթ	2,451,376	10,353,798
Գործակալներին վճարված միջնորդավճարներ	(769,889)	(3,508,047)
Այլ եկամուտ	259,594	1,555,299
Անձնակազմի գծով ծախսեր	(726,298)	(3,061,335)
Վարձակալության գծով ծախսեր	(179,067)	(652,239)
Մաշվածություն և ամորտիզացիա	(135,010)	(472,677)
Թույլտվության վճարներ	(185,643)	(627,103)
Ինկասացիոն ծառայություններ	(137,926)	(600,811)
Գովազդի և մարքեթինգի ծախսեր	(82,225)	(433,754)
Աջակցման և սպասարկման ծախսեր	(71,325)	(347,555)
Բանկային ծառայությունների վճարներ	(108,883)	(440,347)
Պարտքային կորուստների գծով ծախս	(3,608)	(90,276)
Այլ ծախսեր	(193,989)	(830,644)
Գործառնական գործունեությունից շահույթ	**117,107**	**844,309**
Ֆինանսական եկամուտ	74,470	513,574
Ֆինանսական ծախսեր	(21,101)	(70,747)
Զուտ ֆինանսական եկամուտ/(ծախս)	**53,369**	**442,827**
Շահույթ մինչև հարկերը	**170,476**	**1,287,136**
Շահութահարկի գծով ծախս	(39,580)	(294,966)
Տարվա շահույթ	**130,896**	**992,170**

3. Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Բաժնե տիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Պահուստ ային կապի տալ	Չբաշխված շահույթ	Ընդամենը	Չվերա հսկող բաժնե մաս	Ընդամենը սեփական կապիտալ
2024 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,212,750**	**1,405,250**	**181,913**	**2,478,186**	**5,278,099**	**11,889**	**5,289,988**
Տարվա շահույթ				992,170	992,170		992,170
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք				**992,170**	**992,170**		**992,170**
Սովորական բաժնետոմսերի թողարկում	7,700				7,700		7,700
Շահաբաժիններ*				(1,250,000)	(1,250,000)		(1,250,000)
Հատկացում պահուստին					-		-
Այլ օգտագործումներ					-		-
Գործարքներ սեփականատերերի հետ	**7,700**	**-**	**-**	**(1,250,000)**	**(1,242,300)**	**-**	**(1,242,300)**
2025 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,220,450**	**1,405,250**	**181,913**	**2,220,356**	**5,027,969**	**11,889**	**5,039,858**
Տարվա շահույթ				130,896	130,896		130,896
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք				**130,896**	**130,896**		**130,896**
Սովորական բաժնետոմսերի թողարկում					-		-
Շահաբաժիններ*					-		-
Հատկացում պահուստին					-		-
Այլ օգտագործումներ					-		-
Գործարքներ սեփականատերերի հետ	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**
2026 թ. մարտի 31-ի դրությամբ	**1,220,450**	**1,405,250**	**181,913**	**2,351,252**	**5,158,865**	**11,889**	**5,170,754**

4. Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	I եռ. 2026	2025
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված միջնորդավճարներ	1,774,351	9,873,628
Վճարված միջնորդավճարներ	(675,504)	(3,573,275)
Զուտ մուտքեր արտարժույթով գործառնություններից	237,802	1,427,570
Մուտքեր մատուցված այլ ծառայություններից	492,690	537,003
Ստացված այլ եկամուտ	6,447	70,896
Վճարումներ աշխատակիցներին	(634,495)	(3,044,596)
Վճարված այլ ծախսեր	(929,291)	(4,043,698)
Ստացված տոկոսներ	74,470	513,574
Վճարված տոկոսներ	(12,847)	(45,333)
Դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	**333,623**	**1,715,769**
(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում	-	
Օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ	638,324	325,461
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	445,106	148,787
Պաշարների փոփոխություն	20,093	109,441
Կանխավճարների փոփոխություն	(14,847)	47,704
Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում	-	-
Օպերատորներին վճարվելիք գումարներ	(5,148,667)	989,337
Գործակալների կողմից դեպոնացված միջոցներ	(2,600)	(46,557)
Այլ պարտավորություններ	(20,594)	(10,453)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցների հոսքեր մինչև շահութահարկը	**(3,749,562)**	**3,279,489**
Շահութահարկի վճարում	(65,331)	(476,342)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	**(3,814,893)**	**2,803,147**

4. Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	I եռ. 2026	2025
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Մուտքեր հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառքից	-	8,244
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(137,697)	(690,893)
Ավանդի տեղաբաշխում	-	(162,000)
Ավանդի ելքագրում	-	162,000
Տրամադրված փոխառություններ	-	(153,721)
Տրամադրված փոխառությունների մարում	-	34,656
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**(137,697)**	**(801,714)**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարկերի և փոխառությունների մարում	(400,001)	(1,746,434)
Վարձակալության գծով պարտավորությունների դիմաց վճարումներ	(85,458)	(113,984)
Վճարված շահաբաժիններ	-	(111,023)
Մուտքեր բաժնետիրական կապիտալի թողարկումից	-	-
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**(485,459)**	**(1,971,441)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	**(4,438,050)**	**29,992**
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարվա սկզբում	7,956,035	7,915,646
Արժեզրկման պահուստում փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքներ վրա	(3,608)	(22,248)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(2,465)	32,645
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	**3,511,912**	**7,956,035**

TELCELL

2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն 2026 թվականի առաջին եռամսյակի ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են:

Գլխավոր հաշվապահ
Արթուր Թորոսյան _____

Պատասխանատու ֆինանսական հաշվետվությունների մասով

Գլխավոր տնօրեն
Արտյոմ Ղազարյան _____

Պատասխանատու ոչ ֆինանսական հաշվետվությունների մասով

15. 05. 2026թ.

«ԹԵԼ-ՍԵԼ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐՈՋ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
"ТЕЛ-СЕЛЛ"
"TEL-CELL"
02703102
ОТКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО
ARMENIA OPEN JOINT-STOCK COMPANY

Սույն հաշվետվությունը պարունակում է ապագային ուղղված հայտարարություններ, որոնք վերաբերում են գործառնական ծավալների ու ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ Ընկերության ընթացիկ սպասումներին և կանխատեսումներին: Այս հաշվետվության մեջ մենք ներկայացրել ենք մեր սպասումներն ու կանխատեսումները Ընկերության ապագա գործունեության վերաբերյալ, որոնք ենթակա են հայտնի և անհայտ ռիսկերի, անորոշությունների և այլ գործոնների, ինչի արդյունքում իրական արդյունքները կարող են զգալիորեն տարբերվել կանխատեսվածներից: Այդ գործոնները ներառում են, բայց չեն սահմանափակվում՝ տեխնոլոգիական փոփոխություններով, կարգավորող դաշտի զարգացումներով, մրցակցային ճնշմամբ և սպառողական վարքագծի փոփոխություններով, որոնցից շատերը Ընկերության վերահսկողությունից դուրս են:
Ուստի՝ սույն փաստաթղթում ոչինչ չի կարող դիտարկվել որպես շահույթի երաշխիք կամ կանխատեսում:
Սույն հաշվետվության մեջ ներկայացված որոշ ֆինանսական տվյալներ հիմնված են Ընկերության ներքին կառավարչական հաշվառման վրա և չեն անցել անկախ աուդիտ:

Հնարավոր են էական տարբերություններ վերջնական աուդիտ անցած տարբերակի հետ: Թվային տվյալները կարող են ենթարկված լինել կլորացման, և, հետևաբար, որոշ աղյուսակներում և գրաֆիկներում ներկայացված հանրագումարները կարող են չհամապատասխանել դրանց բաղադրիչների ճշգրիտ թվաբանական գումարին:

TELCELL

Հակոբ Հակոբյան 3, հիմնական մասնաշենք, 1-ին սեկցիա, 3-րդ հարկ
info@telcell.am +374 60 272 222 +374 60 272 223
«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից: